Կարգապահական գործ թիվ ԿԳ-19107

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի հունվարի 21-ի թիվ 18-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/15-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ նաև Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի և Գայանե Դեմիրչյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Արմեն Չիլինգարյանին (արտոնագիր՝ թիվ 1128) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.07.2019թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Արմեն Չիլինգարյանն ունի 160.000 (մեկ հայուր վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2016 թվականի սեպտեմբերից 2019թ. ապրիլ (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>.**

01.08.2019թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 272-Ա/ԿԳ-19107 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Արմեն Չիլինգարյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ

հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 01.08.2019թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 29.10.2019թ., ժամը՝ 19:42-ին 21.01.2020թ., ժամը՝ 19:40-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Արմեն Չիլինգարյանը բացատրություն չի ներկայացրել:

Փաստաբանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Արմեն Չիլինգարյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 16.10.2010թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),
2) փաստաբան Արմեն Չիլինգարյանն ունի 160.000 (մեկ հայուր վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2016 թվականի սեպտեմբերից 2019թ. ապրիլ (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն: (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.07.2019թ. տրամադրված տեղեկանքով),
3) փաստաբան Արմեն Չիլինգարյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 21.01.2020թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն Արմեն Չիլինգարյանի նկատմամբ (արտոնագիր՝ 1128, ստացված՝ 16.10.2010թ.) նկատմամբ 2014-2020թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Չիլինգարյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:* Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ*:

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար*:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետ՝ նաև Կարգ**) 7-րդ կետի՝ *Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը,* իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ *Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Փաստաբան Արմեն Չիլինգարյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.07.20թ. տրամադրված տեղեկանքով: Ավելին՝ կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերընշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելուժամանակ էլ վերընշված խախտումն առկա էր:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ փաստաբան Արմեն Չիլինգարյանը սույն որոշումը կայացնելու դրությամբ իր անդամավճարի պարտքը չի մարել և որ սույն հիմքով առաջին անգամ է հարուցվում կարգապահական վարույթ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմեն Չիլինգարյանին (արտոնագիր՝ թիվ 1128) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի

կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արմեն Չիլինգարյանի (արտոնագիր՝ թիվ 1128) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արմեն Չիլինգարյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան

21 հունվարի 2020թ.
թիվ ԿԳ/15-Ա
ք. Երևան